# ՄԱՅՐ ԴԻՒԱՆ

## ՄԽԻԹԱՐԵԱՆՑ ՎԵՆԵՏԿՈՅ. – Ի Ս. ՂԱԶԱՐ

(*Տար. տես Բազմ.* 1922 *էջ* 191)


## Ի.

*Յովհան եպս. կը տեղեկագրէ թէ ինչպէս եղած է իր մուտքը (Հ. Մանուէլի հետ միասին) ի հեռլա՝ քարոզչական պաշտօնով։ Ակնարկուած սահմնչի Գրիգորը՝ Մխիթարայ վրայ զմայլող, բարեպաշտ ու կենդանի հաւատքով լի անձ մը կը թուի իր մէկ նամակէն, զոր տառապանքի մը ժամուն լալագին աչօք կը գրէ առ Աբբահայր, ըսելով այսպէս. «Աչն ունիմ ընդունիլ ի ձէնջ օրհնութեան գիրս փոքրիկս « առ ի մխիթարութեան ի ժամ ծերութեանս սովացելոյս, ըստ ձայնի մարգարէի որ « ասէ. Ո՜վ տամ, ոչ հացի, այլ լսելոյ բանի տեառն՝ վա՜յ ինձ, այս ամենայն եկն ի « վերայ իմ. վասն մեղաց իմոց»։* (*գրեալ* 1719. *Հոկտ.* 3)։

*Գերաշարգեցելոյ տեառն Մխիթարայ Աբբայի*

*Ցայտ լիցի սիրով, զի նախախնամութեամբն Աստուծոյ ի ԺԶ օրն հասաք ի վէ(ն)նա խաղաղութեամբ, և օթևանս կալաք ի տան սահմնչի Գրիգորին. և գնացեալ առ Նունցն, մատուցաք զգիր սրբոյ ժողովոյն, և նա յետ երկուց աւուրց ետ մեզ զերիս գիրս, զմինն ի վերայ Թրանսիլվանու եպիսկոպոսին, և զմիւսն դատաւորացն Հայոց։ Իսկ երրորդն էր փասափօրթ՝ որ գեղէ ի գեղ և քաղաքէ ի քաղաք տայեն մեզ կառ, մինչ ի ժամանել ի կէրլա։ Եւ պատճառն է զի ոչ գտանի կալէս ի վարձու որ միանգամայն գնայաք ի կէռլայ։ Նաև ոչ իջևանս ի ճանապարհի որպէս իտալիայ. զի վաճառականքն որք զան և գնան իւրեանց ձիու կառօքն են և պաշարօքն. զկնի Զ աւուրց պայքայով գնացաք ի պատիմու դիմացն փէստ անուն զաստպա մի, և անտի առաք ընդ մեզ թարգման մի թուրքէվար գիտացող որ էր մաճար, և այնպէս գեղէ ի գեղ գնացեալ ժամանեցաք ի կէռլա. բայց ի ճանապարհին կրեցաք զնեղութիւնս ոչ սակաւս մինչ ի մերձենալ հիւանդութեան, զի կառն ոչ ունէր զծածկոցս...։ Երբ հասաք ի կէռլայ մատուցաք իշխանացն զգիր նունցին և զձեռն, զոր առեալ սիրով ընկալան և պատուով։ Ապա յետ բազում աւուրց տէր Մինասն որ այժմ է փիօվան ընդ միոյ ազայի ընկերակցեալք ընդ մեզ գնայաք առ ի յարգել զեպիսկոպոսն և մատուցաք նմա զգիր նօնցին որ ըստ դիտման սրբոյ ժողովոյն գրեալ էր նմա, զոր ընթերցեալ յոյժ սիրով ընկալաւ զմեզ, և գրով իւրով կնքեցելով արար զմեզ ինքեան փոխանորդս ի վերայ եկեղեցեացն հայոց, որք են ընդ տէրութեամբ իւրով, և ետ հրաման տալ զդրուշմ մանկանցն հայոց զկնի մկրտութեան այսուհետև, որպէս առնէ սուրբ եկեղեցին. և առնել զձեռնադրութիւնս յեկեղեցիս հայոց և կառավարել զնոսա ուղղափառապէս, և այլն։ Յետ այսորիկ արձակեալք ի նմանէ դարձաք ի կէռլայ, և բնաւք իշխանք տեղւոյս և ամենայն ժողովուրդք հաճեալ հաւանեցան, և ընկալան մեծաւ պատուով հանդերձ ուրախութեամբ, որ և այնուհետև սկիզբն արարեալ քարոզութեան ըստ կարի մերում, և բնաւք ունկնդիր լինին սիրով...։*

*Գերյարգելութեան քում*

*Թուին քրիստոսի* 1720 — *Նուաստագունեղ ծառայ*

*յուլիսի* 10 — *Յօհան եպիսկոպոս սեբաստեան*

*ի սումուչոյվար* — *իր արդ վերատեսուչ Թրանսիլվանիոյ եկեղեցոյն Հայոց*

digitised by A.R.A.R.@

## ԻԱ.

Այս նամակը Հայ հնագէտներուն կը ներկայացնէ հետաքրքրական և օգտակար տեղեկութիւն մը։

Պապերու քաղքին մէջ 1720-ի հոկտեմբերին ձուլուեր է մասնաւոր մետալ մեր Երջանիկ Հօր Ս. Լուսաւորչայ, որուն մանրամասն նկարագիրը կը դնէ Ուրբանեան Վարժարանի նախկին աշակերտ Ստեփաննոս վարդապետ։ Հետևեալ բացատրութիւնները՝ որ են, «թէպէտ զոյ նորին պատկերաւ զառն Աստուծոյ և իւր տիպն», ինչպէս նաև «որոյ և պատկերին նման է ամէնեին տիպս այս», յայտնապէս կը ցուցնեն որ եղած է հոն սակայն անկէ առաջ՝ Հայրապետիս առանձին պատկերի տպագրութիւնը, ինչպէս որ անշուշտ կ'ուզենք հասկնալ այսօր ուրիշ սրբազան փոքր պատկերներու մասին։

*Գերյարգելի Հայր և Տէր Վերապատուելագունեղ*

*... Ցետ այսորիկ և զայս ծանիր գերյարգելի, զի այն էրզրումեցի մարմնաւոր աչօք կոյր յովսէփն ի վաղնջուց եհաս ի Հռոմ և նախ հանդիպեալ էր յալիկօնայ. այժմ սակայն ոչ է աստ, քանզի ելեալ գնաց յանապօլի վասն ուխտի որ ի պատիւ սուրբ նշխարացս Լուսաւորչին մերոյ, և անտի շուտով վերստին յայսր դառնալոց է. և ես իսկ ըն բազումս տեսեալ ծանեայ որ իրաւի յոյժ լաւ անձն էր։ Այլ և թօխաթեցի այն ուխտաւորն, որ չուեալ է անդէն, դեռ եւս ոչ եհաս յայսր, և յորժամ հասանիցի և տեսանիցեմ զառաքեցեալ մետալն, յօժարաբար ծառայեցից գերյարգելութեանդ առբերելով ընդ իս զերկու հազար նոյնով տպով տպեցեալ մետալս, զորս խնդրեալ էիր։ Բայց որովհետև զրոյց եղև ի վերայ մետալի, ծանուցանեմ գերյարգելութեանդ եւս զայս, թէ տեսեալ մեր զի մինչև ցայժմ ի բովանդակ հռոմ ոչ գոյր և ոչ է եղեալ տիպ և մետալ սրբոյն գրիգորի մերոյ լուսաւորչին, թէպէտ զոյ նորին պատկերաւ զառն Աստուծոյ և իւր տիպն. վասն որոյ և յոյժ ջանացաք եւս և մեր եղբայր տէր Մինասն զի զտանիցի եւս մետալ նոյնոյ սրբոյն, և արդէն իսկ ահա հասաք ըղձից մերոց։ Քանզի ի պատիւ սրբոյն կամօքն Աստուծոյ ներ այսմ ամսոյ շինեցաւ կարի լաւ և գեղեցիկ տիպ մի մետալի նոյնոյ սրբոյն գրիգորի, և շուրջ զնովաւ երևի հայկական տառիւք գրեցեալ անուն սրբոյն այսպէս.*

*Ս՟. Գրիգ. Լուս. Հյ՟։*

*Ըստ որում և կայ գրեցեալ ի վերայ ասացեալ զառն աստուածային, որոյ և պատկերին նման է ամէնեին տիպս այս, որոյ և ձևն բոլորակ է, և մեծութիւնն չափաւոր և հասարակ. ի մի կողմն ուրեմն մետալիս այսպիսւոյ լինի պատկեր սուրբ գրիգորի։ Իսկ ի միւս կողմն լինելոց է՝ Աստուածածին հանդերձ Քրիստոսիւ ի գիրկս իւր և կամ խաչելութիւնն Քրիստոսի. գինն սոյնոյ մետալիս, շինօղն կու խնդրէ հարիւրին տասը ճիւլի և պակաս չտար։ Ինչևիցէ զայսքան կարճառօտաբար յօժարեցայ ծանուցանել հայրութեանդ գերյարգելւոյ, զի եթէ հաճոյ թուիցի ձեզ եւս գնել յայսպիսի մետալացս, թարց յապաղման և շուտով ծանուցէք ինձ, զորքան կամիք. և մանաւանդ եթէ փոխանակ վերոյասացեալ երկու հազար մետալին կամիցիք առնուլ ըստ մասին և յայսպիսի մետալ, ձեր կամքն է։ Դարձեալ ի միասին ծանուցէք ինձ և զայս թէ արդեօք ձեր մետալներն օրհնել տամ փափին թէ ոչ կամ թէ [illegible]երբից չօրհնած։...*

Գերյարգելութեանդ [illegible]ն

ի Հռոմ
Հոկտեմբ. 19
1720

Պատրաստական ծառայ
Ստեփաննոս վարդապետ

(Շարունակելի)

Հ. Ղ. ՏԱՅԵԱՆ

digitised by A.R.A.R.@